## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ք.Երևան, Գ. Քոչարի 21ա ☎ 54-35-02

01/08/2014թ. N 05- 295

«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին ըստ ցանկի

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ ՊԿՀ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոնի» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքը:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում **«ԿԸՀ-ԾՀԱՊՁԲ-11/1/2»**:

Սույն հրավերի շրջանակներում կնքվելու է երեք պայմանագիր, որոնցից մեկը պայմանով համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am կայքի (այսուհետև՝կայք) միջոցով ոչ ուշ քան 2014թ. օգոստոսի 12-ը, ժամը 11⁰⁰ -ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է Երանուհի Սամվելյանը:

Հայտերը կբացվեն 2014թ. օգոստոսի 12-ին, ժամը 11⁰⁰-ին կայքի միջոցով:

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ ՊԿՀ-ի կարիքների համար բենզին ռեգուլյարի մատակարարումը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ ՊԿՀ-ի կարիքների համար՝ բենզին ռեգուլյարի (որը կազմված է 3 չափաբաժնից) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրերի անբաժանելի մասը, որոնց նախագծերը ներկայացված են սույն հրավերի (ծանուցման) N 1 հավելվածներում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1):

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք երեք պայմանագրերի նախագծերը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ ՊԿՀ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ YeranuhiS@elections.am:

Առդիր՝ 32 էջ:

Հարգանքով՝

Լ.Գրիգորյան

Կատարող՝ Ե.Սամվելյան,
հեռ .56-28-57